

«ԳԼԱՋՈՐ ՈՒՎԿ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն
2019թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	4
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Գլաժոր» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության ղեկավարությանը և խորհրդին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գլաժոր» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 2019թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Գլաժոր» ՈՒՎԿ ՓԲԸ ֆինանսական վիճակը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԻ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԻ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Առանցքային աուդիտորական հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն՝ առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար,

որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներից համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման արձնագրատվության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական

ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյեք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համալրվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի, որի արդյունքը այս աուդիտորական եզրակացությունն է, ղեկավարը Ալբերտ Ասատրյանն է:

28 ապրիլի 2020թ.

Սերգեյ Ասատրյան

Տնօրեն

Ալբերտ Ասատրյան

Առաջադրանքի ղեկավար

ԱՍՏՐՅԱՆՍ ՍՊԸ (Կրեստոն Արմենիա)

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծնք.		
Տոկոսային եկամուտ	330,051	383,013
Տոկոսային ծախս	(28,891)	(48,465)
Զուտ տոկոսային եկամուտներ	4	334,548
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	72,358	39,965
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(345)	(986)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	5	38,979
Փոխարժեքային տարբերություններից զուտ եկամուտ/(վնաս)	(6,008)	1,512
Այլ գործառնական եկամուտներ	26,906	24,731
Այլ գործառնական արդյունք	6	26,243
Գործառնական եկամուտ	394,071	399,770
Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումից կորուստներ (արժեզրկման վերականգնում)	7 (64,505)	(41,382)
Անձնակազմի գծով ծախսեր	8 (60,416)	(62,006)
Վարչական և այլ գործառնական ծախսեր	9 (43,362)	(46,995)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	225,788	249,388
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	10 (47,938)	(49,993)
Տարվա շահույթ	177,850	199,395
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	177,850	199,395

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Կազմակերպության ղեկավարության
կողմից 2019թ. ապրիլի 28-ին՝



Աննա Գաբրիելյան
Գործադիր տնօրեն

Սաթիկ Գրիգորյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է
ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 56-րդ էջերում
ներկայացված էլից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծնթ.		
<i>Ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ բանկերում	11	155,686	161,248
Հաճախորդներին տրված վարկեր	12	2,697,661	2,376,656
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	13	238,886	261,064
Այլ ակտիվներ		3,793	2,804
Ընդամենը ակտիվներ		3,096,026	2,801,772
<i>Պարտավորություններ</i>			
Փոխառություններ	14	565,614	437,562
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		13,741	15,091
Հետաձգված հարկային պարտավորություն	15	31,560	42,636
Այլ պարտավորություններ և պահուստներ	16	16,094	15,316
Ընդամենը պարտավորություններ		627,009	510,605
<i>Սեփական կապիտալ</i>			
Բաժնետիրական կապիտալ	17	1,616,700	1,616,700
Վերագնահատման պահուստ		183,540	200,226
Գլխավոր պահուստ		88,010	77,320
Կուտակված շահույթ		580,767	396,921
Ընդամենը սեփական կապիտալ		2,469,017	2,291,167
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		3,096,026	2,801,772

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 56-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնետիրական կապիտալ	Վերագնահատման պահուստ	Գլխավոր պահուստ	Կուտակված շահույթ/ (վնաս)	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	1,616,700	216,912	67,814	190,346	2,091,772
Տարվա շահույթ	-	-	-	199,395	199,395
Հիմնական միջոցի պահուստի ճշգրտում	-	(16,686)	-	16,686	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	(16,686)	-	216,081	199,395
Հատկացում պահուստին	-	-	9,506	(9,506)	-
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	9,506	(9,506)	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,616,700	200,226	77,320	396,921	2,291,167
Տարվա շահույթ	-	-	-	177,850	177,850
Հիմնական միջոցի պահուստի ճշգրտում	-	(16,686)	-	16,686	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	(16,686)	-	194,536	177,850
Հատկացում պահուստին	-	-	10,690	(10,690)	-
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	10,690	(10,690)	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,616,700	183,540	88,010	580,767	2,469,017

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 56-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսներ	328,600	356,679
<i>Վճարված տոկոսներ</i>	<i>(23,236)</i>	<i>(48,231)</i>
Ստացված միջնորդավճարներ	112,676	285
<i>Վճարված միջնորդավճարներ</i>	<i>(345)</i>	<i>(23,468)</i>
Ստացված տույժեր և տուգանքներ	12,377	18,846
<i>Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից</i>	<i>(39,876)</i>	<i>(60,957)</i>
Դրամական զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	(38,272)	(27,749)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	351,924	215,405
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	(423,963)	564,216
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ	(72,039)	779,621
Վճարված շահութահարկ	(60,362)	(61,471)
<i>Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ</i>	<i>(132,401)</i>	<i>718,150</i>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք	-	11,100
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(825)	(2,246)
<i>Ներդրումային գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ</i>	<i>(825)</i>	<i>8,854</i>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառությունների զուտ հոսքեր	130,696	(803,632)
<i>Ֆինանսական գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ</i>	130,696	(803,632)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ նվազում	(2,530)	(76,628)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(3,032)	317
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	161,248	237,559
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	155,686	161,248

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 56-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «Կազմակերպություն») ստեղծվել է «Գլաձորբանկ» ՓԲԸ-ի ըստ գործունեության տեսակի՝ որպես վարկային կազմակերպություն փոփոխման 27 մայիսի 2003թ. թիվ 01-246 միջնորդագրի և ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի՝ թիվ 83 բգ Ա որոշմամբ, և համարվում է «Գլաձորբանկ» ՓԲԸ-ի իրավահաջորդը:

Կազմակերպությունը զբաղվում է վարկավորմամբ և տրամադրում է սպառողական, հիփոթեքային և առևտրային վարկեր, ինչպես նաև իրականացնում է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով թույլատրվող այլ գործունեություն, որը ներկայացված է ստորև՝

- ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել մմանատիպ գործարքներ, բացառությամբ հրապարակային օֆերտաների միջոցով միջոցների ներգրավման,
- տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,
- տրամադրել երաշխիքներ,
- թողարկել, գնել, վաճառել արժեթղթեր, կատարել նման այլ գործառնություններ,
- մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,
- «Գլաձոր» ՈՒՎԿ ՓԲԸ-ի անունից թողարկել ճանապարհային չեկեր, իրականացնել այդ չեկերի առքուվաճառք, թողարկել վարկային քարտեր, իրականացնել այդ քարտերի սպասարկումը,
- «Գլաձոր» ՈՒՎԿ ՓԲԸ-ի անունից թողարկել և տեղաբաշխել առանց ապահովման կամ երրորդ անձանց կողմից տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր,
- մատուցել ֆինանսական գործակալի ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն,
- գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,
- գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորներ և մետաղադրամ,
- իրականացնել ֆինանսական վարձակալություն,
- ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր և այլ արժեքներ,
- մատուցել ֆինանսական խորհրդատվություն,
- ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,
- ՀՀ ԿԲ համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպությունների բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված այլ գործառնություններ:

Կազմակերպությունը նշված գործառնությունները կատարում է ինչպես տեղական արժույթով, այնպես էլ արտարժույթով:

Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1բ N 42:

Կազմակերպության գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1բ N 42:

2019թ. ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 13 մարդ (2018թ.՝ 13 մարդ):

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը ՀՀ-ում ունի 1 գրասենյակ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1):

Կազմակերպության կանոնադրական կապիտալը բաղկացած է 32,334 հատ սովորական բաժնեմասերից՝ յուրաքանչյուրը հիստուն հազար ՀՀ դրամ անվանական արժեքով:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա գեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Կազմակերպության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Կազմակերպության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 19-ում:

2.5 Կազմակերպության կողմից ընդունված նոր և փոփոխված ստանդարտներ

Կազմակերպությունը, սկսած 2019թ. հունվարի 1-ից պատրաստվող տարեկան ֆինանսական հաշվետվություններում, առաջին անգամ կիրառել է հետևյալ ստանդարտները և փոփոխությունները՝

ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՄԿ		Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար	Կիրառությունը
ՖՀՄՍ 16	Նկարագրություն	2019թ. հունվարի 1	Հետընթաց

ՖՀՄՍ 16. «Վարձակալություններ»

ՖՀՄՍ 16-ը փոխարինել է ՀՀՄՍ 17. «Վարձակալություններ», ՖՀՄՄԿ 4. «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՄԿ 15. «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՄԿ 27. «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»: Ստանդարտը սահմանում է վարձակալությունների ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները, և վարձատուներից պահանջվում է ճանաչել վարձակալության մեծ մասը հաշվեկշռում:

ՖՀՄՍ 16 ներկայացնում է վարձակալության պայմանագրերի և հաշվապահական հաշվառման վարման համապարփակ մոդել երկու կողմերի համար՝ վարձակալի և վարձատուի մոտ: Այն վարձակալի մոտ ներկայացնում է էական փոփոխություններ՝ բացառելով գործառնական և ֆինանսական վարձակալության միջև տարբերությունը, պահանջում է օգտագործման իրավունք ունեցող ակտիվի ճանաչում և բոլոր նոր սկսվող վարձակալությունների գծով վարձակալության պարտավորության՝ «Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով» ճանաչում, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Ի տարբերություն վարձակալի մոտ հաշվապահական հաշվառման վարման, վարձատուի մոտ հաշվապահական հաշվառման պահանջները հիմնականում մնացել են անփոփոխ:

ա) Վարձակալության նոր սահմանման ազդեցությունը

Կազմակերպությունը գործնական նպատակահարմարությունից ելնելով, չի վերագնահատել արդյոք պայմանագրերը վարձակալություն են կամ պարունակում է արդյոք վարձակալության տարր, ինչը թույլատրվում է ՖՀՄՍ 16-ին անցման ժամանակ (ՖՀՄՍ 16-ի առաջին անգամ կիրառման պահին): Համապատասխանաբար, վարձակալության սահմանումը, համաձայն ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 4-ի, կշարունակի կիրառվել մինչև 2019թ. հունվարի 1-ը կնքված կամ մինչև նշված ամսաթիվը փոփոխված պայմանագրերի վրա:

Վարձակալության սահմանման մեջ հիմնական փոփոխությունը վերաբերվում է վերահսկողության հասկացությանը: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, արդյոք պայմանագիրը պարունակում է վարձակալություն, ելնելով այն բանից, արդյոք Կազմակերպությունը իրավունք ունի վերահսկել տվյալ իդենտիֆիկացվող ակտիվի օգտագործումը, որոշակի ժամանակահատվածի ընթացքում, փսխատուցման դիմաց: Սա հակասում է ՀՀՄՍ 17-ում և ՖՀՄՄԿ 4-ում մատնանշված «ռիսկերի և օգուտների» շեշտադրմանը:

Կազմակերպությունը ընդունել է վարձակալության սահմանումը և կից ուղեցույցները, որոնք նշված են ՖՀՄՍ 16-ում, բոլոր աայն պայմանագրերի կամ դրանց փոփոխությունների մասով, որոնք կատարվել են կամ կնքվել են 2019թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո: ՖՀՄՍ 16-ի առաջին անգամ ընդունման կամ կիրառման ժամանակ Կազմակերպությունը իրականացրել է սույն ստանդարտի ներդրման ծրագիր (պրոյեկտ): Ներդրման պրոյեկտը ցույց է տալիս, որ ՖՀՄՍ 16-ով նոր սահմանումը էականորեն չի

փոփոխելու պայմանագրերի շրջանակը, որոնք բավարարում են Կազմակերպության վարձակալության սահմանմանը:

բ) Վարձակալի հաշվապահական հաշվառման վրա ազդեցությունը

Համաձայն նախկին ստանդարտի (ՀՀՄՍ 17), ՖՀՄՍ 16-ը փոխում է Կազմակերպությունում վարձակալության հաշվապահական հաշվառումը, որոնք նախկինում ՀՀՄՍ 17-ով դասակարգվել են գործառնական վարձակալություն՝ դուրս մնալով՝ չներառվելով, հաշվապահական հաշվեկշռում:

ՖՀՄՍ 16-ի կիրառման ժամանակ, Կազմակերպությունը բոլոր վարձակալությունների մասով (բացառությամբ վերոնշյալ դեպքերի) պետք է՝

- Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ճանաչում որպես ակտիվ և Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության ճանաչում Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում (ՖԴՄՀ), որոնք սկզբնական ճանաչման պահին չափվում են ապագա վարձավճարների ներկա արժեքով: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում և ներկայացվում են առանձին հոդվածով
- Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի գծով մաշվածության ճանաչում և Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության տոկոսների ճանաչում Շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում
- Վարձակալական գծով լրացուցիչ պարտավորության ճանաչում և ներառում Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով կամ Տոկոսային վարկեր և փոխառություններ պարտավորություններում
- «Կանխավճարներ» և «Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր» հոդվածներում ներառված նախկին գործառնական վարձակալության հոդվածները ապաճանաչի
- «Հետաձգված հարկային պարտավորությունները» այս մասով նվազեցնել, որը պայմանավորված է ակտիվ ճանաչված վարձակալության և պարտավորություն հետևանքով հետաձգված հարկի ազդեցության փոփոխության հետ
- Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում առանձնացված ներկայացնի վարձակալության մայր գումարի վճարումն ու տոկոսները (որոնք ներառված են ֆինանսական գործունեության մեջ): ՖՀՄՍ 16-ի համաձայն վարձակալները պետք է ներկայացնեն դրամական միջոցների վճարումները՝ Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով, ֆինանսական գործունեության հոդվածում (Գործառնական գործունեությունից ֆինանսական գործունեություն): ՖՀՄՍ 16-ի ընդունումը ոչ մի ազդեցություն չի ունեցել դրամական միջոցների զուտ հոսքերի վրա:

Վարձակալության արտոնությունները (օրինակ՝ առանց վարձավճարի ժամանակահատված) պետք է ճանաչվեն օգտագործման իրավունքի ձևով ակտիվի և կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության չափման մի մաս:

ՖՀՄՍ 16-ի համաձայն օգտագործման իրավունքի ձևով ակտիվները արժեզրկման ստուգման են ենթարկվում համաձայն ՀՀՄՍ 36. «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի:

Կարճաժամկետ վարձակալությունների դեպքում (երբ վարձակալության ժամկետը մինչև 12 ամսի կամ ավելի կարճ է) և փոքրաթեք վարձակալած ակտիվների դեպքում (ինչպիսիք են օրինակ՝ սեղանները և համակարգիչները, փոքրաթեք գրասենյակային կահույքը և հեռախոսները), Կազմակերպությունը որոշել է ճանաչել վարձակալության գծով ծախսը

գծային մեթոդով, ինչը թույլատրվում է ՖՀՄՍ 16-ով: Այս ծախսը ներկայացված է Շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում «Այլ ծախսեր» հոդվածում:

գ) Վարձակառուի հաշվապահական հաշվառման վրա ազդեցությունը

ՖՀՄՍ 16-ը էականորեն չի փոփոխել հաշվապահական հաշվառումը վարձատրուի մոտ: ՖՀՄՍ 16-ի համաձայն, վարձատրում շարունակում է դասակարգել վարձակալության տված գույքը կամ ֆինանսական վարձակալություն կամ գործառնական վարձակալություն և այս երկու տեսակի վարձակալությունների համար առանձին է վարում հաշվառումն:

Այնուամենայնիվ ՖՀՄՍ 16-ը փոխել և ընդլայնել է պահանջվող բացահայտումները, մասնավորապես ինչպես է վարձատրում կառավարում ռիսկերը՝ կապված վարձով տրված ակտիվների իր մասով մնացորդի գծով:

Համաձայն ՖՀՄՍ 16-ի, միջանկյալ վարձատրում (ենթավարձակալություն) պետք է այս երկու պայմանագրերը՝ վարձակալած ակտիվներ և վարձով տրված ակտիվներ, առանձին հաշվառի, որպես առանձին պայմանագրեր: Միջանկյալ վարձատրում պետք է դասակարգի ենթավարձակալությունը, որպես ֆինանսական կամ գործառնական՝ հիմնվելով գլխավոր պայմանագրից բխող օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ճանաչման վրա (այլ ոչ թե այնպես, ինչպես նշված էր ՀՀՄՍ 17-ում):

Այս փոփոխությունների համաձայն Կազմակերպությունը վերադասակարգել է իր որոշ ենթավարձակալական պայմանագրեր, որպես ֆինանսական վարձակալություն: ՖՀՄՍ 9. «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի համաձայն ակնկալվող վնասների գծով պահուստը ճանաչվել է ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերում:

Ստորև ներկայացված է ՖՀՄՍ 16-ի ընդունման ազդեցությունը.

Ազդեցությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա.

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	Առանց ՖՀՄՍ 16 ստանդարտի կիրառման	ՖՀՄՍ 16 ճշգրտումներ	Վերահաշ- վարկված
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	238,886	-	238,886
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-
Ընդհանուր ակտիվների վրա գուտ ազդեցությունը	238,886	-	238,886
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ/(վնաս)	580,767	-	580,767
	580,767	-	580,767

Պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր			
վարձակալության գծով	-	-	-
Պահուստներ	150	-	150
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15,944	-	15,944
Ընդհանուր պարտավորությունների վրա գուտ ազդեցությունը	16,094	-	16,094
	596,861	-	596,861

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	Առանց ՖՀՄՍ 16 ստանդարտի կիրառման	ՖՀՄՍ 16 ճշգրտումներ	Վերահաշ- վարկված
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	261,064	-	261,064
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-
Ընդհանուր ակտիվների վրա գուտ ազդեցությունը	261,064	-	261,064

Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ/(վնաս)	396,921	-	396,921
	396,921	-	396,921

Պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր			
վարձակալության գծով	-	-	-
Պահուստներ	-	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15,316	-	15,316
Ընդհանուր պարտավորությունների վրա գուտ ազդեցությունը	15,316	-	15,316
	412,237	-	412,237

2018թ. հունվարի 01-ի դրությամբ

Հազար դրամ	Առանց ՖՀՄՍ 16 ստանդարտի կիրառման	ՖՀՄՍ 16 ճշգրտումներ	Վերահաշ- վարկված
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	293,701	-	293,701
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-
Ընդհանուր ակտիվների վրա գուտ ազդեցությունը	293,701	-	293,701

Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ/(վնաս)	190,346	-	190,346
	190,346	-	190,346
Պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	-	-	-
Պահուստներ	-	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16,094	-	16,094
Ընդհանուր պարտավորությունների վրա գուտ ազդեցությունը	16,094	-	16,094
	206,440	-	206,440

Ազդեցությունը շահույթի կամ վնասի մասին հաշվետվության վրա.

2019թ.

Հազար դրամ	Առանց ՖՀՄՍ 16 ստանդարտի կիրառման	ՖՀՄՍ 16 ճշգրտումներ	Վերահաշ- վարկված
Գործառնական եկամուտ	394,071	-	394,071
Այլ եկամուտներ/(ծախսեր)	(168,283)	-	(168,283)
Շահութահարկի գծով ծախս	(47,938)	-	(47,938)
	177,850	-	177,850

2018թ.

Հազար դրամ	Առանց ՖՀՄՍ 16 ստանդարտի կիրառման	ՖՀՄՍ 16 ճշգրտումներ	Վերահաշ- վարկված
Գործառնական եկամուտ	399,770	-	399,770
Այլ եկամուտներ/(ծախսեր)	(150,382)	-	(150,382)
Շահութահարկի գծով ծախս	(49,993)	-	(49,993)
	199,395	-	199,395

Կազմակերպության ղեկավարությունը չի կանխատեսում, որ այս փոփոխությունների կիրառումն էական ազդեցություն կունենա Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընթացիկ տարում Կազմակերպությունը կիրառել է ՀՀՄՄԽ կողմից թողարկված ՖՀՄՍ մի շարք փոփոխություններ, սմեկնաբանություններ, որոնք գործում են 2019թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Դրանց ընդունումը որևէ էական ազդեցություն չի ունեցել ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների կամ բացահայտումների վրա:

**Նշված ամսաթվից
 կամ դրանից հետո
 սկսվող տարեկան
 ժամանակաշրջանների
 համար**

ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՄԿ	Նկարագրություն	
Փոփոխություններ ՖՀՄՍ 9. <i>«Կանխավճարի հատկանիշներ՝ բացասական փոխհատուցմամբ»</i> ստանդարտում	ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները հստակեցնում են, որ գնահատելու համար, թե արդյոք կանխավճարի հատկանիշը բավարարում է «բացառապես մայր գումարի և տոկոսների վճարումներ» (SPPI) չափանիշին, օպցիոնն օգտագործող կողմը կարող է վճարել կամ կանխավճարի համար ստանալ ողջամիտ փոխհատուցում՝ անկախ կանխավճարի պատճառից: Այլ կերպ ասած, բացասական փոխհատուցմամբ կանխավճարի հատկանիշներ ունեցող ֆինանսական ակտիվները ինքնաբերաբար չեն ձախողում SPPI չափանիշը:	1 Հունվարի, 2019թ.
Փոփոխություններ ՀՀՄՍ 28. <i>«Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում»</i> ստանդարտում	Փոփոխությունները հստակեցնում են, որ ՖՀՄՍ 9-ը՝ տարածվում է ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության այլ ֆինանսական գործիքների վրա, որի նկատմամբ չի կիրառվում բաժնային մեթոդը, ներառյալ դրա արժեզրկման պահանջները: Դրանք ներառում են երկարաժամկետ մասնակցությունը, որն, ըստ էության, ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկությունում գուտ ներդրումների մաս է կազմում:	1 Հունվարի, 2019թ.
Փոփոխություններ ՖՀՄՍ 3. <i>«Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»</i> ստանդարտում	Փոփոխությունները հստակեցնում են, որ երբ Կազմակերպությունը վերահսկողություն է ստանում համատեղ գործունեության նկատմամբ, Կազմակերպությունը կիրառում է փոխերով ձեռք բերված ձեռնարկատիրական գործունեության միավորման պահանջները՝ ներառյալ համատեղ գործունեությունում նախկինում ունեցած մասնակցության վերաչափումը իրական արժեքով: Նախկինում ունեցած մասնակցությունը, պետք է վերաչափվի, ներառյալ համատեղ գործունեության հետ կապված ցանկացած չճանաչված ակտիվներ, պարտավորություններ և գույքի:	1 Հունվարի, 2019թ.
ՖՀՄՍ 11. <i>«Համատեղ պայմանավորվածություններ»</i> ստանդարտ	Փոփոխությունները հստակեցնում են, որ այն դեպքում երբ ձեռնարկատիրական գործունեություն սահմանվող համատեղ գործունեության մասնակցող կողմերից մեկը, որը, սակայն համատեղ վերահսկողություն չունի	1 Հունվարի, 2019թ.

		Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար
ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՄԿ	Նկարագրություն	
	համատեղ գործունեության նկատմամբ, վերահսկողություն է ստանում համատեղ գործունեության նկատմամբ, ապա Կազմակերպությունը համատեղ գործունեությունում նախկինում ունեցած մասնակցությունը չի վերաչափում:	
ՀՀՄՍ 12. «Շահութահարկեր» ստանդարտ	Փոփոխությունները հստակեցնում են, որ Կազմակերպությունը պետք է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ կապիտալի հաշվետվություններում ճանաչի շահաբաժինների գծով շահութահարկի հետևանքը, կախված այն հանգամանքից, թե որտեղ է Կազմակերպությունը ի սկզբանե ճանաչել բաշխման ենթակա շահույթը սկզբնավորող գործարքները: Սա այն դեպքն է, անկախ նրանից, թե հարկային տարբեր դրույքաչափեր են տարածվում բաշխված և չբաշխված շահույթների վրա:	1 Հունվարի, 2019թ.
ՀՀՄՍ 23. «Փոխառության ծախսումներ» ստանդարտ	Փոփոխությունները հստակեցնում են, որ եթե որակավորվող ակտիվի կառուցման կամ ձեռքբերման համար ստացված հատուկ փոխառությունը դեռևս ունի չմարված մնացորդ և այդ ակտիվը պատրաստ է իր նպատակային օգտագործման կամ վաճառքի համար, ապա փոխառության մնացորդը դիտարկվում է որպես ընդհանուր նպատակով ստացված և ներառվում է կապիտալացման դրույթի հաշվարկի մեջ:	1 Հունվարի, 2019թ.
Փոփոխություններ ՀՀՄՍ 19. «Աշխատակիցների հատուցումներ. Պլանի փոփոխումը, կրճատումը և վերջնահաշվարկը» ստանդարտում	Փոփոխությունները հստակեցնում են, որ անցյալ ծառայության արժեքը (կամ վերջնահաշվարկից օգուտը կամ վնասը) հաշվարկվում է սահմանված հատուցումների գծով պարտավորության (ակտիվի) չափման միջոցով՝ օգտագործելով փոփոխված ենթադրությունները և առաջարկվող հատուցումները համեմատելով պլանի փոփոխությունից (կամ կրճատումից կամ վերջնահաշվարկից) առաջ և հետո, բայց անտեսելով ակտիվի վերին սահմանաչափը (որը կարող է առաջանալ այն դեպքում, երբ	1 Հունվարի, 2019թ.

**Նշված ամսաթվից
կամ դրանից հետո
սկսվող տարեկան
ժամանակաշրջանների
համար**

ՖՀՄՄ, ՀՀՄՄ և ՖՀՄՄԿ	Նկարագրություն	
	սահմանված հատուցումների պլանը ավելցուկային դիրքում է): Փոփոխվել են նաև այն կետերը, որոնք վերաբերում են ընթացիկ ծառայության արժեքի և գուտ սահմանված հատուցումների գծով պարտավորության (ակտիվի) գուտ տոկոսների չափմանը:	
ՖՀՄՄԿ 23. «Անորոշություններ շահութահարկը որոշելիս» ստանդարտ	ՖՀՄՄԿ 23 սահմանում է, ինչպես որոշել հարկային հաշվառման մոտեցումը, երբ առկա են անորոշություններ շահութահարկը որոշելիս: Սեկնաբանությունը պահանջում է. • Որոշել, արդյոք անորոշ հարկային հաշվառման մոտեցումը դիտարկվում է առանձին, թե որպես Կազմակերպություն, և • Գնահատել, արդյոք հավանական է, որ հարկային մարմինը կընդունի կազմակերպության կողմից իր շահութահարկի հաշվարկում օգտագործված կամ առաջարկվող անորոշ հարկային հաշվառման մոտեցումը: - Եթե այո, Կազմակերպությունը հարկային հաշվառման մոտեցումը պետք է որոշի իր շահութահարկի հաշվարկում օգտագործված կամ ապագայում օգտագործվող հարկային հաշվառման մոտեցմանը համապատասխան: - Եթե ոչ, ապա Կազմակերպությունը անորոշության ազդեցությունը պետք է արտացոլի հարկային հաշվառման մոտեցումը որոշելիս՝ օգտագործելով կամ ամենահավանական գումար կամ ակնկալվող արժեք մեթոդները:	1 Հունվարի, 2019թ.

Նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել

Հրապարակվել են որոշ հաշվապահական հաշվառման նոր ստանդարտ(ներ) և մեկնաբանություններ, որոնք պարտադիր չեն 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի հաշվետվությունների պատրաստման համար և վաղաժամ չեն կիրառվել Կազմակերպության կողմից: Նոր ընդունված հաշվապահական ստանդարտների և մեկնաբանությունների ազդեցության գնահատումը Կազմակերպության կողմից ներկայացված է ստորև՝

		Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար	Կիրառությունը
ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՍԿ	Նկարագրություն		
ՖՀՄՍ 17. «Ապահովագրության պայմանագրեր» ստանդարտ	ՖՀՄՍ 17-ը սահմանում է սկզբունքներ ապահովագրական պայմանագրերի ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման համար և փոխարինում է «Ապահովագրության պայմանագրեր» ՖՀՄՍ 4-ին:	1 Հունվարի, 2022թ.	Հետընթաց
ՖՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28 (փոփոխություններ)	Ներդրողի և նրա հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ հատկացում	Փոփոխությունների ուժի մեջ մտնելու ամսաթիվը դեռ պետք է որոշվի ՀՀՄՍԽ կողմից:	
Փոփոխություններ ՖՀՄՍ 3-ում. «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ստանդարտում	Փոփոխությունները հստակեցնում են, որ չնայած բիզնեսը սովորաբար ունենում է արդյունք, գործունեության և ակտիվների ինտեգրված այդ հավաքածուն պարտադիր չէ որ որակվի որպես <u>բիզնես</u> : Որպեսզի ձեռք բերվող գործունեության և ակտիվների ինտեգրված այդ հավաքածուն համարվի <u>բիզնես</u> , ապա այն պետք է նվազագույնը պարունակի մուտքեր և բովանդակային գործընթաց, որոնք միասին զգալիորեն նպաստում են արդյունքներ ստեղծելու կարողությանը:	1 Հունվարի, 2020թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՀՀՄՍ 1. «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» և ՀՀՄՍ 8. «Էականության սահմանումը» ստանդարտներում	Փոփոխությունների նպատակն է միայն տալ էականության տերմինի ավելի հասկանալի սահմանում ՀՀՄՍ 1 ստանդարտում և մտադրություն չկա փոփոխել էականության հասկացությունը ՖՀՄՍ ստանդարտներում: «Անորոշ» էական տեղեկատվություն և ոչ էական տեղեկատվություն հասկացությունները ընդգրկվել են նոր սահմանման մեջ: Օգտագործողների որոշումների վրա ազդող էականության շեմի ազդեցությունը «կարող է ազդել» եզրույթից փոփոխվել է՝ դառնալով	1 Հունվարի, 2020թ.	Առաջընթաց

<u>«հավանականորեն հնարավոր է ազդեցություն ունենալ»:</u> ՀՀՍՍ 8 ստանդարտում էականության սահմանումը փոխարինվել է ՀՀՍՍ 1 ստանդարտում էականության սահմանման հղումով: Ի լրումն, ՀՀՍՍԽ-ն փոփոխել է այլ ստանդարտներն ու Հայեցակարգային հիմունքները, որոնք ներառում են էականության սահմանումը կամ հղում են կատարում «էական» տերմինին՝ ստանդարտներին համապատասխանությունը սպառնալից նպատակով:			
Փոփոխություններ ՖՀՍՍ ստանդարտներում Հայեցակարգային հիմունքներին հղումներում	Վերանայված Հայեցակարգային հիմունքների հետ միասին, որն ուժի մեջ են մտնում 2018թ. մարտի 29-ին հրապարկվելուց հետո, ՀՀՍՍԽ-ն փոփոխություններ է կատարել նաև ՖՀՍՍ ստանդարտներում Հայեցակարգային հիմունքներին հղումներում: Փաստաթուղթը ներառում է փոփոխություններ ՖՀՍՍ 2, ՖՀՍՍ 3, ՖՀՍՍ 6, ՖՀՍՍ 14, ՀՀՍՍ 1, ՀՀՍՍ 8, ՀՀՍՍ 34, ՀՀՍՍ 37, ՀՀՍՍ 38, ՖՀՍՍԿ 12, ՖՀՍՍԿ 19, ՖՀՍՍԿ 20, ՖՀՍՍԿ 22 և ՍՍԿ 32 ստանդարտներում:	1 Հունվարի, 2020թ.	Առաջընթաց
Կազմակերպության ղեկավարությունը չի կանխատեսում, որ վերոնշյալ տեղեկատվությունը էական ազդեցություն Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:			

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Ընդհանուր դրույթներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, որոնք ուժի մեջ են եղել 2019թ. դեկտեմբերի 31-ին:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Էական հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները, որոնք կիրառվել են Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ներկայացված են ստորև:

3.2 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Կազմակերպության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

Արժույթ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	479.70	483.75
Եվրո	537.26	553.65
Ռուսական ռուբլի	7.77	6.97

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացումն այլ արժույթով

Կազմակերպության ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են դրամից՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը: Փոխարժեքային տարբերությունների արդյունքը գրանցվում է անմիջապես այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կրեդիտագրվում է սեփական կապիտալին՝ արտարժույթի վերագնահատման պահուստում:

3.3 Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	- 34 տարի
Տնտեսական գույք	- 8 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 5 տարի
Համակարգչային տեխնիկա	-1-5 տարի
Այլ	-5-8 տարի

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Կազմակերպության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է՝

Համակարգչային ծրագրեր	-1-10 տարի
-----------------------	------------

3.5 Վարձակալված ակտիվներ

Համաձայն ՀՀՍՍ 17-ի՝ «Վարձակալություն», վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է վարձակալին, երբ նրան են փոխանցվում սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները: Վարձակալված ակտիվը վարձակալության սկզբում ճանաչվում է վարձակալված գույքի իրական արժեքով կամ, ավելի ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձավճարների ներկա արժեքով՝ գումարած միանվագ վճարները, եթե այդպիսիք կան: Համապատասխան գումարը ճանաչվում է որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն, անկախ նրանից, որ վարձակալական վճարների մի մասը կարող է վճարման ենթակա լինել մինչև վարձակալության սկիզբը:

Վարձակալված ակտիվների հետագա հաշվառումը, այսինքն՝ մաշվածության մեթոդի ընտրությունը և օգտակար ծառայության ժամկետների որոշումը, համապատասխանում են սեփականության իրավունքով Կազմակերպությանը պատկանող նմանատիպ ակտիվների հաշվառմանը: Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները նվազեցվում են վարձավճարների չափով՝ հանած ֆինանսական վճարը, որը ներառվում է ֆինանսական ծախսերում: Ֆինանսական վարձակալության տոկոսային մասն իրենից ներկայացնում է մնացորդային արժեքի հաստատուն մաս, որը վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Մյուս բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են

որպես ծախս՝ գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

3.6 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գույք արժեքից նվազագույնով: Իրացման գույք արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ), և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Կազմակերպության ֆինանսական գործիքների վերաբերյալ, ներառյալ՝

- Կազմակերպության բոլոր ֆինանսական գործիքների ներկայացումը
- Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են Կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Կազմակերպությունը դառնում է ֆինանսական գործիքների պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների) նախնական ճանաչման ժամանակ համապատասխանաբար գումարվում կամ պակասեցվում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքից: Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսերը անմիջապես ճանաչվում են շահույթ կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

- Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը

- Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող

Պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին, սկզբնական ճանաչումից հետո չափվում են ամորտիզացված արժեքով, այն դեպքում, երբ.

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է պահել Ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու համար, և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ Ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է ապահովել պայմանագրային դրամական միջոցների հոսքեր և պահվում են վաճառքի նպատակով, և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉԾՎ)

Մնացած բոլոր Ֆինանսական ակտիվները, որոնք չեն ներառվում վերոնշյալների մեջ, ինքնասինքյան չափվում են իրական արժեքով շահույթ կամ վնասի միջոցով (ԻԱՉԾՎ):

Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող

Բոլոր Ֆինանսական պարտավորությունները, սկզբնական ճանաչումից հետո, չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կամ ԻԱՉԾՎ մեթոդը: Այնուամենայնիվ, Ֆինանսական պարտավորությունները, որոնք առաջանում են, երբ Ֆինանսական ակտիվի փոխանցումը չի համապատասխանում ապաճանաչմանը կամ երբ շարունակական ներգրավվածության մոտեցում է կիրառվում և Կազմակերպության կողմից, թողարկված Ֆինանսական երաշխիքի պայմանագրերը չափվում են ստորև նշված հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխան՝

Ֆինանսական պարտավորություններ (ԻԱՉԾՎ) ներկայացվող

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՉԾՎ ներկայացվող, երբ Ֆինանսական պարտավորությունը հանդիսանում է՝ (ա) ձեռնարկատիրական գործունեության միավորման մեջ ձեռք բերողի պայմանական հատուցումը (բ) պահվում է առևտրային նպատակով կամ (գ) այն նախատեսված է ԻԱՉԾՎ-ի համար:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրային նպատակով պահվող եթե.

- այն բացառապես ձեռք է բերվել մոտ ապագայում վերավաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ այն հանդիսանում է իդնտիֆիկացվող Ֆինանսական գործիքների մի մաս, որը Կազմակերպությունը միասին է կառավարում և ունի կարճաժամկետ շահույթ ստանալու փաստ:

- Այն ածանցյալ գործիք է, բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք հանդիսանում են ֆինանսական երաշխիքի պայմանագրեր կամ նախանշված արդյունավետ հեջավորման գործիքներից:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը միայն երբ ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները սպառվում են կամ երբ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը և էականորեն ակտիվի սեփականության բոլոր ռիսկերն ու հատույցները մեկ այլ կազմակերպության: Եթե Կազմակերպությունը ոչ փոխանցում է, և ոչ էլ պահպանում սեփականության հետ կապված էականորեն բոլոր ռիսկերն ու հատույցները և շարունակում է վերահսկել փոխանցված ակտիվը, ապա Կազմակերպությունը ճանաչում է իր հետաքրքրությունը ակտիվի հանդեպ և այն գումարների հետ կապված պարտավորությունը, որն այն կարող է վճարել: Եթե Կազմակերպությունը կրում է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերը և հատույցները, ապա Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ճանաչում է ստացված օգուտների գրավադրված փոխառությունները:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի ապաճանաչման ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի և հատուցված կամ հատուցվող գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում: Ի հավելում, պարտքային գործիքի մեջ ներդրման, դասակարգված որպես «Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող» (ԻԱՉԾՎ), ապաճանաչման ժամանակ ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը վերադասակարգվում է շահույթ կամ վնասում: Եվ հակառակը, բաժնային գործիքի մեջ ներդրման ապաճանաչման ժամանակ, որը սկզբնական ճանաչման ժամանակ Կազմակերպությունը ընտրել է ԻԱՉԾՎ մեթոդը ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը չի վերադասակարգվում շահույթ կամ վնասում, այլ տեղափոխվում է կուտակված շահույթ կամ վնաս:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը միայն և միայն, երբ Կազմակերպությունը ֆինանսական գործիքի պարտավորություններից ազատվել է, չեղարկվել է կամ սպառվել է պայմանագրային պարտավորությունը: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության մնացորդային արժեքի և փոխհատուցված կամ փոխհատուցվող գումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում:

Երբ Կազմակերպությունը առկա վարկատուի հետ մեկ պարտքային գործիքը փոխանակում է մյուսի հետ՝ զգալիորեն տարբեր պայմաններով, ապա այսպիսի փոխանակումը դիտարկվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նույն կերպ, Կազմակերպությունը առկա պարտավորության կամ դրա մի մասի էական պայմանների փոփոխությունը դիտարկում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ենթադրվում է, որ պայմանները էական տարբեր են համարվում, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքը, ներառյալ բոլոր վճարված վճարումների և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված և ստացված վճարումների տարբերությունը, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքից: Եթե փոփոխությունը էական չէ մինչև փոփոխությունը պարտավորության

մնացորդային արժեքի և փոփոխությունից հետո դրամական հոսքերի ներկա արժեքի միջև, ապա տարբերությունը պետք է ճանաչվի շահույթ կամ վնասում այլ եկամուտների կամ վնասների հետ մեկտեղ, որպես փոփոխությունից շահույթ կամ վնաս:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Պարտքային գործիքներում ներդրումների արժեզրկումից կորուստները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ ԻԱՉԱՀԱ-ով, Կազմակերպությունը ճանաչում է հետևյալ դեպքերում՝ սպասվելիք վարկային կորուստների, ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի պայմանագրերի մասով: «Դեբիտորական պարտքերի սպասվող կորուստների» (ԴՊՍԿ) գումարները, սկսած համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչումից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին թարմացվում են՝ վարկային ռիսկում փոփոխություններն արտացոլելու համար:

Կազմակերպությունը միշտ ճանաչում է ԴՊՍԿ-ը առևտրային դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի համար: Այս ֆինանսական ակտիվներից սպասվող վարկային կորուստները գնահատվում են՝ օգտագործելով պահուստի հաշվարկման համար մշակված համապատասխան մատրիցան՝ հիմնվելով Կազմակերպության պատմական վարկային կորուստի փորձի վրա, ճշգրտված պարտապանների համար հատուկ գործոններով, ընդհանուր տնտեսական պայմաններով և ընթացիկ, ինչպես նաև հաշվետու ամսաթվի պայմաններին կանխատեսվող ուղղության գնահատմամբ, ներառյալ երբ կիրառելի է դրամի արժեքը ժամանակի մեջ:

Մյուս բոլոր ֆինանսական գործիքների համար, Կազմակերպությունը ճանաչում է ԴՊՍԿ-ն, երբ տեղի է ունեցել սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճ: Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալի չի բարձրացել սկզբնական ճանաչումից ի վեր, ապա Կազմակերպությունը այդ ֆինանսական գործիքից կորուստի պահուստը չափում է 12 ամսվա ԴՊՍԿ-ի համարժեք գումարով:

ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է սպասվող վարկային կորուստներ ֆինանսական գործիքի ամբողջ կյանքի ընթացքում հնարավոր դեֆոլտի արդյունքում: Եվ հակառակը, 12 ամսվա ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է կյանքի ընթացքում ԴՊՍԿ-ի այն մասը, որը սպասվում է որ կառաջանա ֆինանսական գործիքի հնարավոր դեֆոլտից հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

3.8 Արժեզրկում

Վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկում

Կազմակերպությունը կանոնավոր կերպով վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ դրանք արժեզրկման տեսանկյունից գնահատելու համար: Կազմակերպության վարկերի արժեզրկման պահուստները ձևավորվում են վարկերի և դեբիտորական պարտքերի պորտֆելում առաջացած արժեզրկումից կորուստները ճանաչելու համար: Կազմակերպությունը վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստին

կատարվող մասհանումների վերաբերյալ գնահատումները դիտարկում է որպես գնահատման անորոշությունների հիմնական աղբյուր, որովհետև ա) դրանք բավականին զգայուն են մի ժամանակաշրջանից մյուսը տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, քանի որ հիմնված են չվճարումների չափերի և ապագա կորուստների գնահատման վերաբերյալ ենթադրությունների հիման վրա, որոնք կատարվել են անցյալ գործունեության փորձի հիման վրա և բ) ցանկացած զգալի տարբերություն Կազմակերպության կողմից գնահատված կորուստների և դրանց փաստացի չափերի միջև կհանգեցնի անհրաժեշտության, որ Կազմակերպությունը գրանցի հավելյալ պահուստներ, որոնք կարող են ունենալ նշանակալի ազդեցություն նրա ապագա ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կազմակերպությունը կիրառում է անհատական և խմբային գնահատումների համադրություն՝ հաշվետու ամսաթվի դրությամբ արժեզրկման պահուստին մասհանումները որոշելիս:

Առանձին վերցրած նշանակալի վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք արժեզրկված չեն, ինչպես նաև բոլոր այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք անհատապես չեն գնահատվել, ներառվում են խմբային հիմունքով գնահատվող վարկերի և դեբիտորական պարտքերի մեջ: Խմբային հիմունքով գնահատվող վարկերը և դեբիտորական պարտքերը խմբավորվում են ըստ նմանատիպ վարկային ռիսկի բնութագրիչների և ժամկետանության կարգավիճակի և գնահատվում համապատասխանաբար: Կազմակերպությունը ապագա դրամական հոսքերում փոփոխությունները գնահատում է՝ ելնելով նախկին ցուցանիշներից, հաճախորդների նախկին վարքագծից, տվյալ խմբի վարկառուների կողմից վճարումների կատարման իրավիճակի վատթարացման դիտարկելի տվյալներից, ինչպես նաև տնտեսական պայմաններից, որոնք առնչություն ունեն խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման հետ: Դեկավարությունն օգտագործում է գնահատականներ՝ ելնելով վնասների նախորդ փորձից այն ակտիվների գծով, որոնք ունեն վարկային ռիսկին բնորոշ հատկանիշներ և առկա է վարկերի խմբին համանման արժեզրկման հայտանիշ: Կազմակերպությունը հիմնվում է դեկավարության դատողության վրա՝ վարկերի խմբի գծով դիտարկելի տվյալները ճշգրտելու համար այնպես, որ դրանք արտացոլեն պատմական տվյալներում չարտացոլված ընթացիկ հանգամանքները: Խմբային հիմունքով գնահատման մեթոդաբանության խնդիրն է՝ ապահովել, որ արժեզրկումից կորստի պահուստը արտացոլի կորստի պատճառ հանդիսացող իրադարձությունները, որոնք արդեն տեղի են ունեցել, սակայն դեռ չեն գնահատվել անհատական հիմունքով:

Ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստավորումը որոշվում է՝ ելնելով ներկա տնտեսական և քաղաքական հանգամանքներից: Կազմակերպությունը հնարավորություն չունի կանխատեսելու հանգամանքների փոփոխությունները Հայաստանում և դրանց հնարավոր ազդեցությունները ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստների պահուստի համարժեքության վրա ապագա ժամանակաշրջաններում:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մշակվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գույքի գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա

հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեթղթերին, արժեզրկումից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

3.9 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

Երբ Կազմակերպությունը մտադրություն ունի վաճառել ոչ ընթացիկ ակտիվներ կամ ակտիվների խումբ և երբ այդ վաճառքի տեղի ունենալը հավանական է 12 ամսվա ընթացքում, ապա ակտիվը կամ ակտիվների խումբը պետք է դասակարգվի և ներկայացվի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես վաճառքի համար պահվող ակտիվներ:

Վաճառքի համար պահվող ակտիվները չափվում են ակտիվի՝ մինչև վերադասակարգումն ունեցած հաշվեկշռային արժեքից և «իրական արժեքի՝ հանած վաճառքի ծախսումներ»-ից՝ նվազագույնով: Այս ակտիվների գծով մաշվածություն չի հաշվարկվում: Այնուամենայնիվ, վաճառքի համար պահվող որոշ ակտիվներ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվները և հետաձգված հարկային ակտիվները, հաշվառվում են սովորականի պես:

Վաճառքի համար պահվող ակտիվների վաճառքից կամ վերագնահատումից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Այլ եկամուտ» կամ «Այլ ծախսեր» հոդվածներում: Վաճառքի դեպքում տվյալ ակտիվի գծով սեփական կապիտալում առկա վերագնահատման պահուստը վերագրվում է կուտակված շահույթին:

3.10 Սեփական կապիտալ

Կազմակերպության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.11 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Կազմակերպությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.12 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույքիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների

սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Կազմակերպությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Կազմակերպությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.13 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Կազմակերպությունը առաջին անգամ ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտը կիրառել է 2018թ. հունվարի 1-ից: Մի շարք նոր ընդունված ստանդարտներ նույնպես կիրառվել են Կազմակերպության կողմից 2018թ. հունվարի 1-ից, բայց դրանք էական ազդեցություն չունեն Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կազմակերպության կողմից նոր ընդունված ստանդարտներին անցման հետևանքով պահանջվող համադրելի ֆինանսական հաշվետվությունները չեն վերաներկայացվել:

ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտը սահմանում է համապարփակ մոտեցումներ հասույթի որոշման գծով, թե երբ հասույթը պետք է ճանաչվի և ինչ գումարով պետք է ճանաչվի: Մույն ստանդարտ փոխարինում է ՀՀՄՍ 18. «Հասույթ», ՀՀՄՍ 11. «Կառուցման պայմանագրեր» ստանդարտներին և համապատասխան մեկնաբանություններին: Համաձայն ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտի, հասույթը ճանաչվում է, երբ գնորդը կամ ծառայություն ստացողը ձեռք է բերում վերահսկողություն ապրանքի կամ ծառայության նկատմամբ: Վերահսկողության իրավունքի փոխանցման ժամկետի որոշումը, «Ժամանակի կոնկրետ պահին», թե «Ժամանակի ընթացքում», պահանջում է դատողություններ:

Կազմակերպությունը ընդունել է ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտը՝ օգտագործելով կոմուլյատիվ (աճողական) ազդեցության մեթոդը (առանց գործնական օգուտ ունենալու մտադրության)՝ սկզբնական ընդունման պահին կիրառելով սկզբնական ընդունումից առաջացող ազդեցությունները (այսինքն՝ 2018թ. հունվարի 1-ից): Համապատասխանաբար 2018թ. համադրելի ֆինանսական տեղեկատվությունը չի վերաներկայացվել: Այսինքն այն ներկայացված է ինչպես նախորդ տարի ներկայացվել է՝ ՀՀՄՍ 18. «Հասույթ», ՀՀՄՍ 11. «Կառուցման պայմանագրեր» ստանդարտների և մեկնաբանություններին համապատասխան: Համապատասխանաբար ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտով պահանջվող բացահայտումները, ինչպես ընդունված է, չեն կիրառվում համադրելի տեղեկատվության վրա:

4 Տոկոսային եկամուտ և ծախս

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Տոկոսային եկամուտ</i>		
Հաճախորդներին տրված վարկեր	327,344	285,234
Բանկային հաշիվներ	2,707	97,779
	330,051	383,013
<i>Տոկոսային ծախս</i>		
Ստացված փոխառություններ	(28,891)	(48,465)
	(28,891)	(48,465)
	301,160	334,548

5 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ</i>		
Վարկերի տրամադրումից սպասարկումից	72,358	39,965
	72,358	39,965
<i>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր</i>		
Կանխիկացումից միջնորդավճարներ	(26)	(932)
Այլ միջնորդավճարներ	(319)	(54)
	(345)	(986)
	72,013	38,979

6 Գործառնական եկամուտներ/(ծախսեր)

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխարժեքային տարբերություններից զուտ եկամուտ/(ծախս)	(6,008)	1,512
Ստացված տույժեր և տուգանքներ	25,001	24,425
Այլ գործառնական եկամուտներ	1,905	306
	20,898	26,243

7 Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումից կորուստներ (արժեզրկման վերականգնում)

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկում	(358,565)	(254,354)
Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման վերականգնում	294,060	212,972
	(64,505)	(41,382)

8 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցումներ աշխատակիցներին	59,964	61,901
Անձնակազմի ուսուցման ծախսեր	42	25
Այլ ծախսեր	410	80
	60,416	62,006

9 Վարչական և այլ գործառնական ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գովազդ և մարքեթինգ	126	746
Անվտանգություն	3,330	3,600
Վերանորոգում և պահպանում	5,605	5,792
Մաշվածություն և ամորտիզացիա	23,314	24,065
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	3,183	3,135
Մասնագիտական ծառայություններ	3,582	3,456
Գրասենյակային ծախսեր	2,307	2,379
Ներկայացուցչական ծախսեր	174	179
Այլ ծախսեր	1,740	3,642
	43,362	46,995

10 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	(59,011)	(56,589)
Հետաձգված ակտիվների և պարտավորությունների շարժ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման արդյունքում	11,073	7,226
	(47,938)	(49,363)

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՄ)	225,788		249,388	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով (2018թ.՝ 20%) (Զհարկվող եկամուտ)	(47,938)	(20.0)	(49,993)	(20.0)
/չնվազեցվող ծախսեր, գուտ	-	-	630	0.3
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	(47,938)	(20.0)	(49,363)	(19.7)

11 Դրամական միջոցներ և համարժեքներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	145,102	18,354
Բանկային հաշիվներ	10,584	142,894
	155,686	161,248

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված, ժամկետանց կամ գրավադրված չեն, դրանց նկատմամբ չկան որևէ սահմանափակումներ: 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի բանկերում տեղաբաշխված այնպիսի միջոցներ, որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

12 Հաճախորդներին տրված վարկեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Բիզնես վարկեր</i>		
Իրավաբանական անձիք	606,336	720,142
Անհատ ձեռնարկատերեր	85,471	101,165
	691,807	821,307
<i>Անհատներին տրված վարկեր</i>		
Հիփոթեքային վարկեր	1,222,049	802,127
Այլ սպառողական վարկեր	830,731	865,850
	2,052,780	1,667,977
	2,744,587	2,489,284
Արժեզրկման գծով պահուստ	(46,926)	(112,628)
	2,697,661	2,376,656

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2019թ. ընթացքում.

Հազար դրամ	Բիզնես վարկեր	Անհատներին տրված վարկեր	Ընդամենը
Մնացորդը տարեսկզբին	(9,210)	(103,418)	(112,628)
Զուտ վերկանգնում/(ծախս)	(6,918)	(40,008)	(46,926)
	(16,128)	(143,426)	(159,554)

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2018թ. ընթացքում.

Հազար դրամ	Բիզնես վարկեր	Անհատներին տրված վարկեր	Ընդամենը
Մնացորդը տարեսկզբին	(37,884)	(32,165)	(70,049)
Զուտ վերկանգնում/(ծախս)	28,674	(71,253)	(42,579)
	(9,210)	(103,418)	(112,628)

12.1 Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար դրամ	Համախառն վարկեր	Արժեզրկման պահուստ	Զուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ (%)
<i>Բիզնես վարկեր</i>				
<i>Իրավաբանական անձիք</i>				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	606,336	(6,063)	600,273	1.00%
<i>Անհատ ձեռնարկատերեր</i>				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	85,471	(855)	84,616	1.00%
	691,807	(6,918)	684,889	1.00%
<i>Անհատներին տրված վարկեր</i>				
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	1,194,336	(15,688)	1,178,648	1.31%
- 31-90 օր ժամկետանց	27,715	(3,326)	24,389	12.00%
	1,222,051	(19,014)	1,203,037	1.56%
Այլ սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	780,761	(7,808)	772,953	1.00%
- մինչև 30 օր ժամկետանց	6,577	(658)	5,920	10.00%
- 31-90 օր ժամկետանց	16,524	(2,265)	14,260	13.71%
- 91-180 օր ժամկետանց	10,571	(2,114)	8,457	20.00%
- 181-270 օր ժամկետանց	16,298	(8,149)	8,149	50.00%
	830,731	(20,993)	809,738	2.53%
	2,052,782	(40,008)	2,012,775	1.95%
	2,744,589	(46,926)	2,697,664	1.71%

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հազար դրամ	Համախառն վարկեր	Արժեզրկման պահուստ	Զուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ (%)
<i>Բիզնես վարկեր</i>				
<i>Իրավաբանական անձիք</i>				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	720,142	(8,457)	711,685	1.17%
<i>Անհատ ձեռնարկատերեր</i>				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	101,165	(1,010)	100,155	1.00%
	821,307	(9,467)	811,840	1.15%
<i>Անհատներին տրված վարկեր</i>				
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	708,617	(12,586)	696,031	1.78%
- մինչև 30 օր ժամկետանց	11,062	(1,327)	9,735	12.00%
- 31-90 օր ժամկետանց	82,449	(8,982)	73,467	10.89%
- 271-365 օր ժամկետանց	2,994	(2,994)	-	100.00%
- 365 օր և ավել ժամկետանց	47,526	(47,526)	-	100.00%
	852,648	(73,415)	779,233	10.45%
<i>Այլ սպառողական վարկեր</i>				
- ոչ ժամկետանց	605,011	(7,173)	597,838	1.19%
- մինչև 30 օր ժամկետանց	5,719	(572)	5,147	10.00%
- 31-90 օր ժամկետանց	16,326	(1,633)	14,693	10.00%
- 91-180 օր ժամկետանց	151,195	(30,239)	120,956	20.00%
- 181-270 օր ժամկետանց	87,598	(43,799)	43,799	50.00%
- 271-365 օր ժամկետանց	8,806	(8,806)	-	100.00%
- 365 օր և ավել ժամկետանց	45,682	(45,682)	-	100.00%
	920,337	(137,904)	782,433	14.98%
	1,772,985	(211,319)	1,561,666	11.92%
	2,594,292	(220,786)	2,373,506	8.51%

12.2 Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրություններ և դատողություններ

Բիզնես վարկեր

Վարկերի արժեզրկումը տեղի է ունենում վարկի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքերի արդյունքում, որոնք ազդեցություն են ունենում վարկի հետ կապված դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերի վրա և որը կարելի է աժանահավատորեն գնահատել: Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի համար բացակայում է դրանց ուղղակիորեն վերագրելի արժեզրկման անկողմնակալ վկայություն:

Բիզնես վարկերի արժեզրկման անկողմնակալ հայտանիշներ են հանդիսանում՝

- վարկային պայմանագրի ժամկետանց վճարները,
- վարկառուի ֆինանսական վիճակի էական վատթարացումը,
- տնտեսական միջավայրի վատթարացումը, բացասական փոփոխությունները վարկառուի շուկաներում:

Բիզնես վարկերի արժեզրկման գծով պահուստը գնահատելիս՝ Կազմակերպությունը հիմնվում է արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծության և արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

Անհատներին տրված վարկեր

Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումը գնահատելիս՝ Կազմակերպությունը հիմնվում է վարկերի յուրաքանչյուր տեսակի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումից կորուստները որոշելիս՝ ղեկավարությունն առաջնորդվում է հետևյալ հիմնական ենթադրություններով.

- անհատներին տրված վարկերի գծով վնասի շարժի դրույքները կայուն են և կարող են գնահատվել վերջին 24 ամիսների ընթացքում կրած վնասի շարժի մոդելի հիման վրա,
- ավելի քան 271 օր ժամկետանց անհատներին տրված վարկերին բաժին է ընկնում 100% վնասի հավանականություն:

12.3 Գրավի վերլուծություն

Բիզնես վարկեր

Բիզնես վարկերը ենթակա են վարկային գնահատման և արժեզրկման ստուգման անհատական հիմունքով: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի ընդհանուր վճարունակությունը վերջինիս տրամադրված վարկի պարտքային որակի կարևոր ցուցանիշ է: Այնուամենայնիվ, գրավն ապահովում է լրացուցիչ ապահովվածություն, և Կազմակերպությունը, որպես կանոն, գրավ է պահանջում իրավաբանական անձանցից:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն բիզնես վարկերի համար ապահովություն ծառայող գրավի և ապահովության այլ միջոցների վերաբերյալ (առանց արժեզրկման)՝ ըստ գրավի տեսակների:

Վերը ներկայացված աղյուսակը բացառում է լրացուցիչ գրավի անհրաժեշտությունը:

Մի քանի տեսակի գրավներով ապահովված վարկերի համար բացահայտվում է այն գրավը, որն առավել նպատակահարմար է արժեզրկման գնահատման համար:

Ոչ ժամկետանց կամ ոչ արժեզրկված վարկերի փոխհատուցելիությունը հիմնականում կախված է վարկառուների վճարունակությունից, այլ ոչ՝ գրավի արժեքից, և Կազմակերպության համար պարտադիր չէ վերանայել գրավի գնահատումը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Անհատներին տրված վարկեր

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը:

Կազմակերպությունը տրամադրում է սպառողական վարկեր ՀՀ դրամով՝ ապահովված երաշխավորությամբ, անշարժ կամ շարժական գույքի գրավով, ինչպես նաև՝ առաջնային շուկայից մեքենաների ձեռքբերման վարկեր՝ ապահովված ձեռք բերված մեքենայի գրավադրմամբ:

Վարկերի համար ապահովություն հանդիսացող անշարժ գույքի իրական արժեքն առնվազն հավասար է վարկերի հաշվեկշռային արժեքին՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ որոշված արժեքը:

Կազմակերպության քաղաքականության համաձայն՝ վարկերի գումարի և գրավի արժեքի հարաբերակցությունը սահմանվում է Կազմակերպության Խորհրդի որոշմամբ:

Բռնագանձված գրավ

Կազմակերպության քաղաքականության համաձայն բռնագանձված գրավը ներառվում է վաճառքի համար պահվող ակտիվների կազմում և նման ակտիվները պետք է վաճառվեն հնարավորինս սեղմ ժամկետներում:

2019 և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի բռնագանձված գրավ:

12.4 Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի իրական արժեք	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի իրական արժեք
Անշարժ գույք	2,341,183	9,364,517	18,924	10,377,610
Փոխադրամիջոցներ	282,839	758,113	4,076	515,498
Երաշխավորություններ	-	779,369	1,506	773,831
Այլ գրավ	157,662	420,756	32,635	929,803
	2,781,683	11,322,754	57,141	12,596,742

2019թ. դեկտեմբերի 31-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի հաշվեկշռային արժեքը, առանց արժեզրկման, ըստ գրավի տեսակների ներկայացված են ստորև՝

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի իրական արժեք	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի իրական արժեք
Անշարժ գույք	2,341,183	9,364,517	18,924	10,377,610
Փոխադրամիջոցներ	282,839	758,113	4,076	515,498
Երաշխավորություններ	-	779,369	1,506	773,831
Այլ գրավ	157,662	420,756	32,635	929,803
	2,781,683	11,322,754	57,141	12,596,742

Վարկերը տրամադրվել են Հայաստանի Հանրապետության հետևյալ մարզերում գտնվող հաճախորդներին.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Վարկ	Տեսակարար կշիռ	Վարկ	Տեսակարար կշիռ
Արարատի մարզ, ՀՀ	68,310	2.5%	63,515	2.6%
Արմավիրի մարզ, ՀՀ	58,872	2.1%	106,624	4.3%
Գեղարքունիքի մարզ, ՀՀ	3,895	0.1%	9,325	0.4%
Շիրակի մարզ, ՀՀ	17,276	0.6%	47,066	1.9%
Երևանի մարզ, ՀՀ	2,206,585	80.4%	2,037,750	81.9%
Լոռիի մարզ, ՀՀ	30,427	1.1%	42,310	1.7%
Վայոց Ձորի մարզ, ՀՀ	73,153	2.7%	14,080	0.6%
Տավուշի մարզ, ՀՀ	12,958	0.5%	10,621	0.4%
Սյունիքի մարզ, ՀՀ	-	0.0%	2,725	0.1%
Կոտայքի մարզ, ՀՀ	211,021	7.7%	109,651	4.4%
Արագածոտնի մարզ, ՀՀ	62,090	2.3%	45,617	1.8%
	2,744,587	100.0%	2,489,284	100.0%
Արժեզրկման գծով պահուստ	(46,926)		(115,778)	
	2,697,661		2,373,506	

Վարկեր ստացած հաճախորդներն իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսության հետևյալ ճյուղերում.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտուր	26,658	43,103
Շինարարություն	95,286	305,092
Ավտովարկեր	167,340	58,998
Սպասարկում	89,956	57,923
Հիփոթեք	1,294,230	802,127
Սպառողական	584,075	720,616
Այլ	487,042	501,425
	2,744,587	2,489,284
Արժեզրկման գծով պահուստ	(46,926)	(115,778)
	2,697,661	2,373,506

12.5 Վարկային ռիսկին ենթարկվածություն

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի մեկ վարկառու (2018թ.-ին՝ մեկ), որին տրամադրված վարկի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 287,778 հազար դրամ (2018թ.-ին՝ 289,774 հազար դրամ):

12.6 Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 19.1-ում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

Վարկային պորտֆելի իրական ժամկետայնությունը կարող է զգալիորեն ավելի երկար լինել պայմանագրային պայմաններով համաձայնեցված ժամկետայնությունից, քանի որ, հավանական է, որ որոշ վարկեր վերանայվեն ժամկետի ավարտից հետո:

13 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Շենք և շինություն	Այլ հիմնական միջոցներ	Տնտե- սական գույք	Տրանսպոր -տային միջոցներ	Համակարգ- չային տեխնիկա	Համակարգ- չային ծրագրեր	Լիցեն- զիաներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>								
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	314,450	9,835	3,478	27,967	9,109	10,543	2,880	378,263
Ավելացում	-	60	-	2,000	855	1,110	221	4,246
Օտարում	-	-	(154)	(16,354)	(451)	-	(220)	(17,178)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	314,450	9,895	3,324	13,614	9,512	11,653	2,881	365,330
Ավելացում	-	-	-	1,272	423	325	239	2,259
Օտարում	-	-	-	(2,000)	-	-	(221)	(2,221)
Վերանորոգումից արժեքի աճ	-	-	-	168	-	-	-	168
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	314,450	9,895	3,324	13,053	9,935	11,978	2,899	365,536
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>								
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	40,404	8,776	3,244	11,669	8,801	10,543	1,123	84,562
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	21,080	336	40	3,573	367	85	534	26,016
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(113)	(164)	(5,363)	(451)	-	(220)	(6,311)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	61,485	9,000	3,121	9,878	8,718	10,628	1,437	104,267
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	21,080	178	30	1,000	413	170	459	23,331
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	-	(728)	-	-	(220)	(948)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	82,565	9,178	3,151	10,150	9,131	10,799	1,676	126,650
<i>Հաշվեկշռային արժեք</i>								
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	274,046	1,059	233	16,298	307	-	1,757	293,701
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	252,965	896	203	3,735	795	1,025	1,445	261,064
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	231,885	717	173	2,903	804	1,180	1,224	238,886

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 20,972 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներն ունեն զրո հաշվեկշռային արժեք (2018թ.՝ 20,152 հազար դրամ):

14 Փոխառություններ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Չապահովված փոխառություններ - Ամորտիզացված արժեքով հաշվարկված</i>		
ՀՀ դրամ	50,089	-
ԱՄՆ դոլար	515,525	437,562
	565,614	437,562

Փոխառություններն ունեն 3-5 տարի մարման ժամկետ և տարեկան ԱՄՆ դոլարի դեպքում 6%, իսկ ՀՀ դրամի դեպքում 13% միջին տոկոսադրույք (2018թ.՝ ԱՄՆ դոլարի դեպքում 6% տոկոսադրույք):

Փոխառությունների իրական արժեքները հետևյալն են.

Հազար դրամ	Իրական արժեք		Հաշվեկշռային արժեք	
	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չապահովված վարկեր և փոխառություններ - Ամորտիզացված արժեքով հաշվարկված	565,614	437,562	565,614	437,562
	565,614	437,562	565,614	437,562

Կազմակերպության տոկոսային և արտարժույթային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 19-ում:

15 Հետաձգված հարկեր

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Տարեկգրի մնացորդ	(42,635)	(49,230)
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս)/փոխհատուցում (տես՝ ծանոթագրություն 10)	11,075	7,226
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված	-	(631)
Տարեվերջի մնացորդ	(31,560)	(42,635)

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2019թ. հունվարի 1	Այլ համա- պարփակ ֆինան- սական արդյունք- ներում ճանաչված	Շահույթի կամ վնասի և այլ համապար- փակ ֆինանսա- կան արդյունք- ների մասին հաշվետ- վությունում ճանաչված	2019թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Հիմնական միջոցներ	1,232	-	-	1,232
Ստացված փոխառությունների իրական արժեքով ճանաչում	4,729	-	-	4,729
Հաճախորդներին տրված վարկեր և դեբիտորական պարտքեր	3,067	-	7,598	10,665
Այլ պարտավորություններից	2,626	-	2,847	5,473
	11,654	-	10,445	22,099
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>				
Հաճախորդներին տրված վարկեր և դեբիտորական պարտքեր	54,229	-	(630)	53,599
Ստացված փոխառությունների իրական արժեքով ճանաչում	60	-	-	60
	54,289	-	(630)	53,659
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	(42,635)	-	11,075	(31,560)

Հազար դրամ	2018թ. հունվարի 1	Այլ համա- պարփակ ֆինան- սական արդյունք- ներում ճանաչված	Շահույթի կամ վնասի և այլ համապար- փակ ֆինանսա- կան արդյունք- ների մասին հաշվետ- վությունում ճանաչված	2018թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Հիմնական միջոցներ	-	-	1,232	1,232
Ստացված փոխառությունների իրական արժեքով ճանաչում	-	-	4,729	4,729
Հաճախորդներին տրված վարկեր և դեբիտորական պարտքեր	3,067	-	-	3,067
Այլ պարտավորություններից	1,930	-	696	2,626
	4,997	-	6,657	11,654
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>				
Հիմնական միջոցներ	54,229	-	-	54,229
Այլ ակտիվներ	60	-	-	60
	54,289	-	-	54,289
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	(49,292)	-	6,657	(42,635)

16 Այլ պարտավորություններ և պահուստներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	14,551	13,176
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	1,392	2,140
Պահուստներ	150	-
Այլ	1	-
	16,094	15,316

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում:
Կազմակերպությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ,
որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

17 Կապիտալ և պահուստներ

17.1 Բաժնետիրական կապիտալ

Հայտարարված բաժնեմասեր	2019թ.	2018թ.
32,334 հատ սովորական բաժնեմաս, յուրաքանչյուրը՝ 50,000 ՀՀ դրամ	1,616,700	1,616,700

Բաժնետերեր	2019թ.		2018թ.	
	բաժնեմասը (հազար դրամ)	բաժնեմասի չափը (%)	բաժնեմասը (հազար դրամ)	բաժնեմասի չափը (%)
Հարությունյան Վարդան	407,450	25.20	407,450	25.22
Գաբրիելյան Հայկուհի	407,150	25.18	205,700	12.73
Գաբրիելյան Էդիտա	311,300	19.26	109,850	6.80
Գասպարյան Էլլադա	201,500	12.46	-	-
Աբրահամյան Լիլիթ	201,450	12.46	-	-
Աբրահամյան Արտուշ	87,850	5.43	87,850	5.44
Գաբրիելյան Նիկոլայ	-	-	805,850	49.81
	1,616,700	100.00	1,616,700	100.00

17.2 Շահաբաժիններ

2019թ. և 2018թ. ընթացքում շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել:

18 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

18.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Կազմակերպությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Գնահատումները հիմնականում վերաբերվում են հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներին և չօգտագործված արձակուրդային պահուստին:

19 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է վարկային կազմակերպությունների համար և Կազմակերպության գործառնությունների կարևոր տարր է: Հիմնական ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, կապված են շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերի հետ:

19.1 Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների,

առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Գնկավարությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Կազմակերպության գործունեությունն ապահովելու համար:

Գնկավարությունը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և համապատասխանության ապահովման համար, այն նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Գնկավարությունն ուղղակիորեն հաշվետու է Խորհրդին:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով:

Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Կազմակերպությունը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը:

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ ամորտիզացված արժեքով չափվող		
- Դրամական միջոցներ և համարժեքներ	155,686	161,248
- Հաճախորդներին տրված վարկեր	2,697,661	2,376,656
	2,853,347	2,537,904

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական պարտավորություններ՝ ամորտիզացված արժեքով չափվող		
- Փոխառություններ	565,614	437,562
- Այլ պարտավորություններ	14,552	13,176
	580,166	450,738

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի, այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների և արտարժույթի փոխարժեքների տատանումների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Կազմակերպությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գծով գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Կազմակերպության տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	2019թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		2018թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
<i>Տոկոսակիր ակտիվներ</i>				
Հաճախողներին տրված վարկեր	22.70%	12.40%	21.05%	15.43%
<i>Պարտավորություններ</i>				
Փոխառություններ	9.80%	6.00%	0.00%	6.00%

Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը, բացառությամբ լողացող տոկոսադրույքով ակտիվների և պարտավորությունների:

Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն

Տոկոսադրույքի վերանայման ժամկետների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով: Ստորև ներկայացվում է տոկոսադրույքի 3%-ով (վերագնորոշման ռիսկ) փոփոխության նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական

կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա.

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Շահույթ կամ վնաս	52,414	58,173
Սեփական կապիտալ	52,414	58,173

Արտարժույթի ռիսկ

Կազմակերպությունն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հոդված			
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Այլ	Ընդամենը
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և համարժեքներ	108,271	741	109,012
Հաճախորդներին տրված վարկեր	1,561,599	-	1,561,599
	1,669,870	741	1,670,611
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Փոխառություններ	515,525	-	515,525
Այլ պարտավորություններ	-	-	-
	515,525	-	515,525
Զուտ արդյունք	1,154,345	741	1,155,086

Հոդված			
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Այլ	Ընդամենը
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և համարժեքներ	24,315	1,994	26,309
Հաճախորդներին տրված վարկեր	1,110,868	-	1,110,868
	1,135,183	1,994	1,137,177
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Փոխառություններ	437,562	-	437,562
Այլ պարտավորություններ	-	-	-
	437,562	-	437,562
Զուտ արդյունք	697,621	1,994	699,615

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Կազմակերպության զգայունությունը ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2018թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2018թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2018թ.՝ 10%): Վերլուծության ժամանակ ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

Դրամի արժեվորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ 10%-ով (2018թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը.

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Այլ	
	2019թ.	2018թ.	2019թ.	2018թ.
Շահույթ կամ վնաս	115,435	69,762	74	199
	115,435	69,762	74	199

2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեվորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառում կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Կազմակերպության նկատմամբ: Կազմակերպությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ստեղծումը՝ վարկային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Կազմակերպության վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Խորհրդի կողմից:

Վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկային փաստաթղթերի պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական մոնիտորինգի ընթացակարգերը:

Վարկերի համար ներկայացվող դիմումները պատրաստվում են վարկավորման բաժնի համապատասխան աշխատակիցների կողմից, այնուհետև փոխանցվում են Վարկային կոմիտեին, որը պատասխանատու է վարկային պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության կառուցվածքային վերլուծության և ֆինանսական վիճակի ուսումնասիրության վրա: Վարկային կոմիտեն ուսումնասիրում և հաստատում է վարկի դիմումը:

Կազմակերպությունը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը:

Կազմակերպության վարկային ռիսկի առավելագույն մակարդակը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է վարկային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները		
Դրամական միջոցներ և համարժեքներ	155,686	161,248
Հաճախորդներին տրված վարկեր	2,697,661	2,376,656
	2,853,347	2,537,904

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 12.1-ում:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Կազմակերպությունը կարող է դժվարություններ ունենալ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում:

Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն:

Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել իրացվելիության ռիսկը:

Կազմակերպության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Խորհրդի կողմից:

Կազմակերպությունը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է բաժնետերից, բանկերից և այլ վարկային կազմակերպություններից ստացված վարկերը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Կազմակերպության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չգեղջված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Կազմակերպությունը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

Ֆինանսական պարտավորությունների ժամկետային վերլուծություն.

2019թ.						
Հազար դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
<i>Ոչ ածանցյալ պարտավորություններ</i>						
Փոխառություններ	43,226	78,307	97,379	146,940	199,762	565,614
Այլ պարտավորություններ	-	14,552	-	-	-	14,552
	43,226	92,859	97,379	146,940	199,762	580,166

2018թ.						
Հազար դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
<i>Ոչ ածանցյալ պարտավորություններ</i>						
Փոխառություններ	143,910	-	-	5,517	288,135	437,562
Այլ պարտավորություններ	-	13,176	-	-	-	13,176
	143,910	13,176	-	5,517	288,135	450,738

19.2 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված իրական արժեքի չափումները

Կազմակերպությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
Նկարագրություն	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
<i>Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>				
Դրամական միջոցներ և համարժեքներ	155,686	155,686	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	2,697,661	-	-	2,697,661
	2,853,347	155,686	-	2,697,661

Հազար դրամ	Իրական արժեքի հիերարխիայի չափում			
Նկարագրություն	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
<i>Իրական արժեքով չափվող պարտավորություններ</i>				
Փոխառություններ	565,614	-	-	565,614
Այլ պարտավորություններ	14,552	14,552	-	-
Ընդամենը	580,166	14,552	-	565,614

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
Նկարագրություն	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
<i>Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>				
Դրամական միջոցներ և համարժեքներ	161,248	161,248	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	2,376,656	-	-	2,376,656
	2,537,904	161,248	-	2,376,656

Հազար դրամ	Իրական արժեքի հիերարխիայի չափում			
Նկարագրություն	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
<i>Իրական արժեքով չափվող պարտավորություններ</i>				
Փոխառություններ	437,562	-	-	437,562
Այլ պարտավորություններ	13,176	13,176	-	-
Ընդամենը	450,738	13,176	-	437,562

19.3 Կապիտալի կառավարում

Կազմակերպության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի Կազմակերպության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: Կազմակերպությունը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն՝ վարկային Կազմակերպությունները պետք է ապահովեն 150,000 հազար դրամի չափով նվազագույն բաժնետիրական կապիտալ (2018թ. 150,000 հազար դրամ), ինչպես նաև 150,000 հազար դրամի չափով ընդհանուր կապիտալ (2018թ. 150,000 հազար դրամ): 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն Կազմակերպության ընդհանուր կապիտալը կազմել է՝ 2,469,017 հազար դրամ (2018թ.-ին՝ 2,291,167 հազար դրամ): 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը բավարարում է բաժնետիրական և ընդհանուր կապիտալի նվազագույն չափի պահանջները: Կազմակերպության կապիտալի նկատմամբ կիրառելի չեն այլ օրենսդրական պահանջներ:

20 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

Իրացվելիության դժվարությունների հետ կապված, ինչպես նաև Հայաստանի շուկայում հրապարակված «տոկոսադրույքի հայտանիշների» բացակայության պատճառով, և ելնելով այն փաստից, որ Կազմակերպության գործարքների մի մասն իրականացվել է կապակցված կողմերի հետ և առանձնահատուկ բնույթի է՝ իրատեսական չէ որոշել ստացված փոխառությունների իրական արժեքները:

21 Պայմանականություններ

21.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Կազմակերպությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Կազմակերպության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Կազմակերպությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

21.2 Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Կազմակերպությունը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

21.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Դեկլարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

21.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Շրջակա միջավայրը, որտեղ Կազմակերպությունը գործում է, չի պահանջում, որպեսզի Կազմակերպությունը ներկայացնի շրջակա միջավայրի վրա իր ունեցած ազդեցության տարեկան հաշվետվություն կամ համանման զեկույց: Դեկլարության համոզմամբ՝ Կազմակերպությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Կազմակերպությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է:

22 Գործարքներ կապակցված կողմերի միջև

Կազմակերպության կապակցված կողմերը ներառում են Կազմակերպության բաժնետերերին, հիմնական ղեկավար անձնակազմին և նրանց հետ կապակցված կազմակերպությունները:

22.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2019թ. դեկտեմբերի 31-ին և նույն ժամանակաշրջանում ավարտված տարվա ընթացքում Կազմակերպության և իր կապակցված կողմերի միջև իրականացված գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները.

Ստացված փոխառություններ (հաշվեկշռային արժեքով)

Հազար դրամ	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ	2019թ. ընթացքում մարված	2019թ. ընթացքում ստացված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ
Գաբրիելյան Հայկուհի	199,762	114,686	107,076	207,372
Գաբրիելյան Էդիտա	121,533	231,013	122,355	230,190
Աբրահամյան Արտուշ	244,319	16,097	260,416	-
	565,614	361,795	489,847	437,562

Հազար դրամ	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ	2018թ. ընթացքում մարված	2018թ. ընթացքում տրված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ
Գաբրիելյան Նիկոլայ	-	539,227	278,585	260,642
Հարությունյան Վարդան	-	579,500	296,482	283,018
Գաբրիելյան Հայկուհի	207,372	189,167	168,117	228,422
Գաբրիելյան Էդիտա	230,190	175,554	187,506	218,238
Աբրահամյան Արտուշ	-	523,676	274,011	249,665
	437,562	2,007,124	1,204,701	1,239,985

22.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ՝ «Անձնակազմի գծով ծախսեր» տողում.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովության վճարները	28,199	28,753
	28,199	28,753